արձանագրութիւնը կայ և վանքի արեւելեան կողմումն է, քայքայուած, երկիւղալի էր բնակելու, ինչպէս քարուկրեայ պատն էր ճեղքուած երկրաշարժից, նոյնպէս և տանիքի փայտերն ու տախտակներն էին փտած և խոնարհած ձիւնից և անձրեւից. իսկ վանահայր Սարգիս վարդապետի շինած հասարակ սենեակների պատերն անձրեւից ուռած և ճեղքուած էին և փայտերի գլուխները փտած, որոյ մէջ ճարակտուր բնակվում էին վանահայրերն ահ ու դողով։ Առաջնորդը սարսափելով՝ երբ պատահում էր վանքի նոր շինութեան նայելու, և հիւրերն տրրտընջալով և բամբասելով, վասն զի նոր սիւներ և յենարաններ տալով պատերին և փայտերին մի հնարքով կառավարվում էին նստողները։

Եւ այս պատճառաւ ստիպուեցանք անշուշտ նոր սենեակներ շինելու և զԱստուած ունելով մեզ զօրավիդն՝ սկսեցինք գործը յաջողուեց և վերջացաւ։

Վանահօր հետ սենեկաց շինութեան ծախսի վրայ շատ խորհելուց և խօսելուց զկնի 1888ին ձմեռը, և շինութեան տեղը որոշելով և ձեւը, ծախուց ցուցակ կազմեցինք, որ բովանդակում էր 2000 մանէթ դրամ, ըստ որում պէտք է շինուէին սենեակները քարուկիր պատերով՝ որ և շինուեց, տանիքը պէտք է ժեշտուէր՝ որ և ժեշտուեց, յատակը պէտք է տախտակմածուէր, այնպէս էլ եղաւ, և ըստ այսմ ամեն բան ըստ կարգին ծրագրեցինք, և այնպէս շինուեցան։

Բայց այս 2000 ռուբլին որտեղից պէտք է գտնէինք. վանքի եկամուտը հազիւ տան ծախսը կհոգար. ուխտաւորի արդիւնք չկար, և ոչ մի ուրիշ միջոց. բայց եթէ դարձեալ օգնեալ Բագուն և կրօնասէր Բագուեցիք, և յիրաւի Բագուեցի պարոնայքը հոգացին։

1888 թուի մայիսին, այն ինչ Բագու էի գտնվում, մի քանի եկեղեցական և դպրոցական գործերի բարեկարգութեան համար, զօր օրինակ։

1. Ս. Էջմիածնի վերանորոգութեան հանգանակութիւնն։
2, Զամախուոյ թեմական դպրանոցի բացման խնդիրն։
3. Զամախուոյ թեմի քարոզչի խնդիրն։